15001. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.

Ա. Los Angeles Community College District-ի քաղաքականությունն է. ապահովել անվտանգ կրթություն, զբաղվածություն և գործարար միջավայր, զերծ՝ արգելված խտրականությունից, անօրինական ճնշումից և սեռական ոտնձգությունից, ինչպես սահմանված է սույն քաղաքականությանը վերաբերող Վարչական կանոնակարգում:

Բ. Աշխատակիցները, ուսանողները կամ մյուս անձիք Օկրուգի անունից գործող, ովքեր ներգրավված են արգելված խտրականության, անօրինական ճնշման կամ սեռական ոտնձգության մեջ, կենթարկվեն ընդհուպ մինչև կարգապահական պատասխանատվության և ներառելով ազատում, հեռացում կամ պայմանագիրը կդադարեցվի, ինչպես սահմանված է սույն քաղաքականության, պետական կամ դաշնային օրենքով առնչվող վարչական կանոնակարգերում:

Գ. Los Angeles Community College District-ի հոգաբարձուների խորհուրդը դատապարտում է սեռական ոտնձգության ցանկացած գործողություն, որը կատարվել է իր տարածքներից որևէ մեկում կամ իր գործունեության որևէ մասում: Los Angeles Community College District-ի –ը պարտավորվում է անհապաղ և համապատասխան քայլեր ձեռնարկել սեռական բռնության հնարավոր երևույթների ուսումնասիրման համար: Սույն Գլխի վկայակոչված խախտումների հետ կապված բոլոր բողոքների հետաքննությունը պետք է իրականացվի Բազմազանության, Հավասարության և Ներառության գրասենյակի հովանու ներքո: Ժամանակավոր, միջանկյալ պատժամիջոցների իրականացումը պետք է վերահսկվի այդ վայրի Title IX-ի կողմից՝համապատասխան ադմինիստրատորների խորհրդով և համաձայնությամբ: Մշտական պատժամիջոցների իրականացումը պետք է վերահսկվի Քոլեջի ռեկտորի կողմից կամ Կրթական ծառայությունների կենտրոնում՝ Տնօրենի

տեղակալի կողմից, ինչպես սահմանված է Վարչական Կանոնակարգերում, որոնք լրացնում են այս քաղաքականությունը:

Ընդունված՝ 02-22-95
Փոփոխված՝ 06-13-07
Փոփոխված՝ 11-05-14
Փոփոխված՝ 03-09-16

15002. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ.

Հոգաբարձուների խորհուրդը վերահաստատում է ակադեմիական ազատության իր նվիրվածությունը, սակայն գիտակցում է, որ ակադեմիական ազատությունը թույլ չի տալիս արգելված խտրականություն: Գաղափարների, տաբուների, վարքի կամ լեզվի քննարկումը, որոնք դասընթացի բովանդակության անբաժան մասն են, ոչ մի դեպքում չպետք է իրենից ներկայացնեն արգելված խտրականություն, անօրինական ճնշում կամ սեռական ոտնձգություն:Հայտնի է , որ կրթության հիմնական գործառույթը՝ ընդհանուր կարծիքի և գաղափարների ուսումնասիրությունն է , որը կարող է հանգեցնել որոշ ուսանողների անհանգստության: Բացի այդ, հայտնի է, որ ակադեմիական ազատությունը ապահովումէ ֆակուլտետի ուսուցման և ուսանողի սովորելու իրավունքը:

Ընդունված՝ 02-22-95
Փոփոխված՝ 06-13-07
Փոփոխված՝ 03-09-16

15003. ՎԵՐԱՀՍԿՈՂՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Բոլոր վերահսկողները պետք է պատասխանատու լինեն պահպանելու աշխատանքային միջավայրը սույն քաղաքականությանը համապատասխան: Ցանկացած վերահսկող, ով տեղեկանում է այնպիսի իրավիճակի մասին, որը կարող է խելամտորեն ընկալվել, որպես այս քաղաքականության խախտում, պարտավոր է զեկուցել այդ տեղեկությունը Բազմազանության, հավասարության և ներառման գրասենյակի տնօրենին:

Ընդունված՝ 02-22-95
Փոփոխված՝ 06-13-07
Փոփոխված 11-05-14
Փոփոխված 03-09-16

15004. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ, ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ.

Ա. Հատուկ կանոնները և ընթացակարգերի հայտարարությունների զեկուցումը՝ արգելված խտրականության, անօրինական ճնշման և սեռական ոտնձգության մասին և հասանելի միջոցների օգտագործման համար, ընդգրկված են առանձին Վարչական կանոնակարգում՝ Ռեկտորի լիազորությամբ: Պատճենները կարելի է ձեռք բերել Օկրուգի կայքէջում և Բազմազանության, հավասարության և Ներառության գրասենյակում: Նման վարչական կանոնակարգերը վերաբերում են թե՛ Title 5 և Title IX-ի համապատասխանությանը, և ներառում է հիմնական տեղեկատվությունը, գործընթացը և սահմանումները:

Բ. Նախկին Խորհրդի XVI կանոնները ներառված են այս Խորհրդի կանոնում և առնչվող վարչական կանոնակարգերում:

Ընդունված՝ 02-22-95
Փոփոխված՝ 06-13-07
Փոփոխված՝ 03-09-16